Կարգապահական գործ թիվ ԿԳ-25073

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՏՅՈՄ ՍԱՐԳՍԻ ՄԱՆԱՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահե Աստվածատրյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի, Արաքս Վարդանյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Լիլիթ Աղեկյանի և վերջինիս ներկայացուցիչ Զարուհի Փոստանջյանի, փաստաբան Արտյոմ Մանասյանի,

քննության առնելով փաստաբան Արտյոմ Մանասյանի (արտոնագիր՝ թիվ 2786) **(այսուհետև նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Լիլիթ Աղեկյանի ներկայացուցիչ Զարուհի Փոստանջյանը **(այսուհետև՝ Դիմողի ներկայացուցիչ)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետև՝ Պալատ)** հայտնել է, որ թիվ 181225225 քրեական վարույթի շրջանակներում քննիչն առանց մեղադրյալ Լիլիթ Աղեկյանի ցանկության, որպես նրա պաշտպան ներգրավել է հանրային պաշտպան Արտյոմ Մանասյանին, ով ոչ մի գործառույթ չի իրականացրել ի պաշտպանություն Լիլիթ Աղեկյանի, իր անգործությամբ մասնակից է դարձել Լիլիթ Աղեկյանի խոշտանգմանն ու ապօրինի անազատության մեջ պահելուն: Փաստաբանը չի բողոքարկել Լիլիթ Աղեկյանի ձերբակալման վերաբերյալ որոշումը, բողոք չի ներկայացրել վերջինիս խոշտանգելու վերաբերյալ:

Լիլիթ Աղեկյանը **(այսուհետև՝ Դիմող)** դիմելով Պալատ հայտնել է, որ Արտյոմ Մանասյանը որպես իր պաշտպան ներգրավվել է ապօրինի, իր կամքին հակառակ, առանց իրեն տեղեկացնելու ստացել է քրեական վարույթի նյութերը:

Դիմողը և Դիմողի ներկայացուցիչը խնդրել են Արտյոմ Մանասյանի նկատմամբ

Թիվ ԿԳ-25073-2-Ա
24.09.2025թ.

հարուցել կարգապահական վարույթ և նրան զրկել փաստաբանական գործունեության արտոնագրից:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 04.08.2025 թվականին Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 09.08.2025թ. ներկայացրած դիմումով, ըստ էության, պնդել է նախկինում արտահայտած իր դիրքորոշումները:

Դիմողը նշել է, որ Փաստաբանին հայտնել է իր նկատմամբ տեղի ունեցած խոշտանգման վերաբերյալ, սակայն վերջինս որևէ կերպ չի արձագանքել:

Դիմողը բացատրությանը կից ներկայացրել է դատաբժշկական եզրակացության պատճենը:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները</u>.

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Արտյոմ Մանասյանին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև նաև՝ Օրենք)** 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, ներկայացնել բացատրություն Լիլիթ Աղեկյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը նշել է, որ Լիլիթ Աղեկյանի շահերի պաշտպանությունն իրականացրել է թիվ 181252225 քրեական վարույթով: Նշված վարույթի շրջանակներում ինքն անգործություն չի դրսևորել, մասնակից չի դարձել Լիլիթ Աղեկյանի խոշտանգմանն ու ապօրինի անազատության մեջ պահելուն: Վկայակոչելով և ներկայացնելով Զարուհի Փոստանջյանի ֆեյսբուքյան էջով կատարված ուղիղ հեռարձակման տեսանյութն, արձանագրել է, որ Լիլիթ Աղեկյանն այդ տեսագրության մեջ հայտնում է, որ բռնության չի ենթարկվել: Նշել է նաև, որ բողոք է ներկայացրել կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու որոշման դեմ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 04.08.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 12.08.2025թ. ներկայացրել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 09.05.2025թ. որոշման դեմ վերաքննիչ քրեական դատարան ներկայացված հատուկ վերանայման բողոքի պատճենը, թիվ ՇԴ/0124/06/25 քրեական գործով վերաքննիչ քրեական դատարանի 09.06.2025թ. որոշման պատճենը և 08.05.2025թ. փաստաբան Զարուհի Փոստանջյանի կատարած ուղիղ հեռարձակման տեսաձայնագրությունը:

Փաստաբանը 08.08.2025թ. ներկայացրել է դիմում ՀՀ փաստաբանների պալատի նախագահին և խնդրել լրացուցիչ ժամկետ՝ ապացույց ներկայացնելու համար, ինչը Պալատի նախագահի կողմից բավարարվել է:

Փաստաբանը 22.08.2025թ. ներկայացրել է ապացույցներ՝ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Միքայել Ավետիսյանի 2025 թվականի հուլիսի 05-ի գրությունը, ՀՀ ՆԳՆ Ո ՀՈԳՎ Կումայրիի բաժնի պետ Կ.Գևորգյանի

02.07.2025 թվականի թիվ 70/22795 գրությունը, ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության գրությունը, Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի «Խափանման միջոց կիրառելու վարույթ հարուցելու մասին» 2025 թվականի մայիսի 08-ի թիվ ՇԴ/0123/06/25 որոշումը, ՀՀ Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի 06.05.2025 թվականի որոշումը, Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հովհաննես Սաֆարյանի գործավար Ա.Ավետիսյանի գրությունը, 09.05.2025 թվականի դատական ծանուցագիրը (գործ ՇԴ/0124/06/25), դիմում Դատարանին՝ միջնորդությունը և կից նյութերը ստանալու վերաբերյալ և ստացականը, ձերբակալման իրավաչափության որոշ հիմնախնդիրների մասին ամփոփագրի պատճենը, Լիլիթ Հրաչիկի Աղեկյանի թվով չորս դիմումները՝ հանրային պաշտպանից հրաժարվելու, Զարուհի Փոստանջյանին որպես իր պաշտպան ներգրավելու վերաբերյալ:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 13.06.2025թ. թիվ 178-Ա/ԿԳ-25073 որոշմամբ Արտյոմ Մանասյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 2.7.2 ենթակետի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

20.06.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետև նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 20.08.2025թ. կազմել է եզրակացություն: Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-ից 4-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 24.09.2025թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Արտյոմ Մանասյանը ստանձնել է Լիլիթ Աղեկյանի շահերի պաշտպանությունը թիվ 18125225 քրեական վարույթի շրջանակներում: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ և* ՀՀ փաստաբանների պալատի հանրային

պաշտպանի գրասենյակի ղեկավարի 06.05.2025 թվականի որոշմամբ:

2. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 09.05.2025թ. որոշմամբ՝ Լիլիթ Աղեկյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանք մեկամսյա ժամկետով: *Սույն փաստը հաստատվում է թիվ ՇԴ/0124/06/25 քրեական գործով՝ վերաքննիչ քրեական դատարանի 09.06.2025թ. որոշման պատճենով:*

3. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 09.05.2025թ. որոշման դեմ Փաստաբանի կողմից Վերաքննիչ քրեական դատարան է ներկայացվել հատուկ վերանայման բողոք: *Սույն փաստը հաստատվում է հատուկ վերանայման բողոքի պատճենով և թիվ ՇԴ/0124/06/25 քրեական գործով՝ վերաքննիչ քրեական դատարանի 09.06.2025թ. որոշման պատճենով:*

4. Թիվ ՇԴ/0124/06/25 քրեական գործով՝ Վերաքննիչ քրեական դատարանը 09.06.2025թ. որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«Այսպիսով, համակողմանի ուսումնասիրության ենթարկելով վերոշարադրյալ փաստարկները, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Լիլիթ Աղեկյանի նկատմամբ որպես խափանման միջոց 1 (մեկ) ամսով կալանք կիրառելու մասին որոշմամբ՝ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, գործով ըստ էության կայացրել է ոչ ճիշտ լուծող դատական ակտ, սակայն տվյալ պարագայում բացակայում է վիճարկվող դատական ակտը բեկանելու իրավական հնարավորությունը և այն պետք է թողնել անփոփոխ՝ որպես խափանման միջոց ընտրված 1 ամսյա կալանքի ժամկետը լրացած լինելու պատճառաբանությամբ ...»:* Սույն փաստը հաստատվում է թիվ ՇԴ/0124/06/25 քրեական գործով՝ Վերաքննիչ քրեական դատարանի 09.06.2025թ. որոշման պատճենով:

5. Զարուհի Փոստանջյանի կատարած ուղիղ հեռարձակման տեսաձայնագրության համաձայն՝

Լ.Աղեկյան. - «Տիկին Փոստանջյան»:

Զ.Փոստանջյան. - «Հա Լիլիթ ջան էդտեղ են մցրել քեզ»:

Լ.Աղեկյան. - «Հա»:

Զ.Փոստանջյան. - «Ստեղ եմ ես հանգիստ էղի, հո քո նկատմամբ բռնություն չեն գործադրել»:

Լ.Աղեկյան. - «Բռնություն չկա, բայց էն Միքայելը իմ դեմ գործա կարում»:

Զ.Փոստանջյան. - «Հա հասկանալիա»:

Սույն փաստը հաստատվում է «youtube»-ում տեղադրված Երկիր Ծիրանի օգտատիրոջ կողմից տեղադրված հոլովակով:

6. Դիմողը չի ընդունել Արտյոմ Մանասյանին որպես իր պաշտպան և չի համագործակցել վերջինիս հետ: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի դիմումներով, ինչպես նաև կարգապահական նիստի ընթացքում հայտնած դիրքորոշումներով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ **Արտյոմ Մանասյանը** փաստաբան է հանդիսանում 27.06.2020 թվականից և 2020-2025թթ ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Փաստաբանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, ինչպես նաև պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածով պայմանավորված, Օրենքով և Փաստաբանի վարքագծի կանոնագրքով փաստաբանի համար սահմանվում են նաև մի շարք այլ պարտականություններ, որոնց շարքում առանձնակի նշանակություն ունի բարձր մասնագիտական պատրաստվածությունը և անհրաժեշտ գործնական փորձի առկայությունը, որի հետ էլ փոխկապակցված է վստահորդի նպաստավոր շահերից ելնելու և բարեխղճորեն և ժամանակին վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու պարտականության պատշաճ կատարումը: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Համադրելով վերը ներկայացված նորմերը և հիմնավորումները գործի փաստական հանգամանքներին, Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը ստանձնելով Դիմողի շահերի պաշտպանությունը փաստացի հետամուտ է եղել վերջինիս շահերի պաշտպանությանը թիվ 18125225 քրեական վարույթի շրջանակներում:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 09.05.2025թ. որոշմամբ՝ Լիլիթ Աղեկյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանք մեկ ամիս ժամկետով՝ չնայած նրան, որ քննիչը միջնորդել էր Լիլիթ Աղեկյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրել երկու ամիս ժամկետով:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 09.05.2025թ. որոշման դեմ Փաստաբանի կողմից Վերաքննիչ քրեական դատարան է ներկայացվել հատուկ վերանայման բողոք:

Թիվ ՇԴ/0124/06/25 քրեական գործով՝ Վերաքննիչ քրեական դատարանը 09.06.2025թ. որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«Այսպիսով, համակողմանի*

ուսումնասիրության ենթարկելով վերոշարադրյալ փաստարկները, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Լիլիթ Աղեկյանի նկատմամբ որպես խափանման միջոց 1 (մեկ) ամսով կալանք կիրառելու մասին որոշմամբ՝ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, գործով ըստ էության կայացրել է ոչ ճիշտ լուծող դատական ակտ, սակայն տվյալ պարագայում բացակայում է վիճարկվող դատական ակտը բեկանելու իրավական հնարավորությունը և այն պետք է թողնել անփոփոխ՝ որպես խափանման միջոց ընտրված 1 ամսյա կալանքի ժամկետը լրացած լինելու պատճառաբանությամբ ...»:

Տվյալ պարագայում, Հանձնաժողովը գտնում է, որ Պատասխանողը կատարել է իր վստահորդի կենսական շահերի և հիմնական իրավունքի պաշտպանությանն ուղղված ողջամիտ բոլոր գործողությունները և դա էլ այն պարագայում, երբ Դիմողը թույլ չի տվել Փաստաբանին ծանոթանալ գործի նյութերին (կարգապահական նիստի ընթացքում Դիմողը չի հերքել Փաստաբանի կողմից նշված հանգամանքը), չի ընդունել որպես իր պաշտպան, ինչպես նաև չի հաղորդակցվել իր պաշտպանի հետ (ձայնային կրիչ, ժամ 01:35, 10-րդ վարկյան):

Անդրադառնալով ձերբակալման որոշումը Փաստաբանի կողմից չբողոքարկելուն, հարկ է նշել հետևյալը.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության նույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ նույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ նույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական*

պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Դատարանը դատական նիստում բողոքը քննարկում է՝ անհապաղ, եթե բողոքում առերևույթ հիմնավորվել է, որ առկա է անձի կյանքին սպառնացող վտանգ, կամ նա ենթարկվել է խոշտանգման:

Տվյալ դեպքում, Դիմողի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որ ենթարկվել է խոշտանգման և այդ մասին հայտնել է Փաստաբանին, իսկ Փաստաբանը չի ձեռնարկել համապատասխան միջոցներ ձերբակալման որոշումը՝ խոշտանգման հիմքով բողոքարկելու համար, որի հիման վրա ապացուցված կհամարվեր Փաստաբանին վերագրվող արարքի կատարումը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը գտնում է, որ Դիմողի կողմից վերը նշված փաստերը չապացուցելը հանգեցնում է այնպիսի բացասական իրավական հետևանքների, որոնց ուժով տվյալ փաստը պետք է համարել չապացուցված և գոյություն չունեցող:

Հանձնաժողովը ցանկանում է հատուկ ընդգծել, որ թեև Փաստաբանը որևէ կերպ չէր կարող ծանրաբեռնվել իրեն վերագրվող կարգապահական խախտումը հերքելու պարտավորությամբ, այնուամենայնիվ վերջինս, չկրելով իր կողմից խախտման բացակայությունն ապացուցելու պարտականություն, ներկայացրել է իրեն վերագրվող

փաստերը հերքող ապացույց, մասնավորապես, Զարուհի Փոստանջյանի կատարած ուղիղ հեռարձակման տեսաձայնագրությունը, որի համաձայն՝

Լ.Աղեկյան. - «Տիկին Փոստանջյան»:

Զ.Փոստանջյան. - «Հա Լիլիթ ջան էդտեղ են մցրել քեզ»:

Լ.Աղեկյան. - «Հա»:

Զ.Փոստանջյան. - «Ստեղ եմ ես հանգիստ էղի, հո քո նկատմամբ բռնություն չեն գործադրել»:

Լ.Աղեկյան. - «Բռնություն չկա, բայց էն Միքայելը իմ դեմ գործա կարում»:

Զ.Փոստանջյան. - «Հա հասկանալիա»:

Այն, որ վերը նշված երկխոսությունը ծավալվել է Դիմողի և Զարուհի Փոստանջյանի միջև չի հերքել նաև Դիմողը կամ վերջինիս ներկայացուցիչը:

Ուշադրության են արժանի նաև Կարգապահական նիստի ընթացքում Կողմերի հայտնած հետևյալ տեղեկությունները.

Հանձնաժողովի անդամի կողմից Փաստաբանին ուղղվում է հետևյալ հարցը. «*Ձեզ ե՞րբ ասեց Լիլիթ Աղեկյանը, որ իրեն խոշտանգում են, և ինչո՞ւ Դուք կանչեցիք շտապ օգնություն»:*

Փաստաբանը պատասխանում է. *«Խոշտանգման հետ կապված բան չի ասել, երբ որ ՁՊՎ-ում էի ես ժամը արդեն 5:30-6-ի կողմերն էր»,*

Հանձնաժողովի անդամի կողմից Փաստաբանին տրվում է հետևյալ հարցը. *«պարոն Մանասյան, ինչի համար կանչեցիք շտապ»,*

Փաստաբանը պատասխանում է. *«ասեց լավ չեմ, ասի կանչեմ»,*

Լիլիթ Աղեկյանը նշում է. *«ես Ձեզ եմ ասել լավ չեմ, մի րոպե ես Ձեզ եմ ասել լավ չեմ՝ դա իմ օբյեկտիվ վիճակն էր, ես իրա հետ չեմ հաղորդակցվել, ես իրանից դժգոհել եմ, ես ասել եմ ոստիկաններին, որ կանչեք սկոռի ես ինձ վատ եմ զգում, ինքն այդ ամենը լսել էր՝ ասում է ինձ է ասել: Ես քո հետ ավել բառ կխոսայի՝ միլիցեքի գործակալի:»:*

Վերոգրյալից հետևում է, որ մի կողմից Դիմողը նշում է, որ որևէ տեղեկատվություն չի տրամադրել Փաստաբանին, իսկ մյուս կողմից պնդում է, որ տեղեկացրել է Փաստաբանին իրեն խոշտանգելու վերաբերյալ, սակայն Փաստաբանը որևէ գործողություն չի ձեռնարկել: Այս համատեքստում, հարկ է նաև նշել, որ Դիմողը ներկայացրել է դիմումներ փաստաբան Արտյոմ Մանասյանից հրաժարվելու վերաբերյալ, ինչպես նաև նշել է, որ իր փաստաբանն է հանդիսանում Զարուհի Փոստանջյանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց՝ խոշտանգված լինելու պայմաններում Փաստաբանին հայտնելու և այդ պայմաններում վերջինիս կողմից իրավաբանական անհրաժեշտ գործողություններ չկատարելու վերաբերյալ:

Անդրադառնալով Դիմողի կողմից ներկայացված փորձագետի եզրակացությանը, հարկ է նշել, որ Դիմողին խոշտանգելու հանգամանքը կարող է ապացուցվել միմիայն կոնկրետ, անառարկելի ապացույցներով, որոնցով հնարավոր կլինի հաստատել 08.05.2025թ. խոշտանգելու առկայությունը և ոչ թե՝ այդ հանգամանքի առկայության տեսական հնարավորությունը, ինչն արձանագրված է փորձագետի եզրակացությամբ:

Միևնույն ժամանակ Հանձնաժողովը ընդգծում է, որ սույն գործի շրջանակներում քննարկվում է բացառապես Փաստաբանի վարքագիծը, այլ ոչ թե Դիմողին խոշտանգման ենթարկելու առկայությունը կամ բացակայությունը:

Հաշվի առնելով ողջ վերոգրյալը, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և դրանց կից ներկայացված ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում բացակայում են փաստաբան Արտյոմ Մանասյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը, իսկ Դիմողի իրավունքների այն խախտումները, որոնց մասին վերջինս պնդում է՝ կապված չեն Փաստաբանի կողմից Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների ենթադրյալ խախտման հետ:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արտյոմ Սարգսի Մանասյանի (արտոնագիր՝ թիվ 2786) նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-25073 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25073-2-Ա
24 սեպտեմբերի 2025թ.
ք.Երևան